ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծման նպատակով մշակվել է «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման Հավելված 1-ի «Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի 7-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով ամրագրված միջոցառումների կատարման պահանջներից ելնելով Կառավարությունը պետք է սահմանի «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման կարգը»:

2. **Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Նախագծի ընդունմամբ վտանգավոր քիմիական նյութեր ներմուծողների և արտահանողների համար սահմանվում է այն պատասխանատվության միջոցը, որը կիրառվելու է Կառավարության որոշմամբ սահմանած «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման» կարգը խախտելու համար:

Նախատեսվում է օրենսգիրքը լրացնել 188.2. հոդվածով և նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախատումների համար պատասխանատվության միջոցների կիրառումը վերապահել շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնին:

Քանի որ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման հավելված 1-ի, կարգը Կառավարության կողմից «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման կարգը» կընդունվի 2023 թվականի նոյեմբերին, իսկ «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ կանոնակարգը նախատեսվում է, որ ուժի մեջ կմտնի 2024 թվականի սեպտեմբերից, ուստի նախատեսվում է օրենսգրքի 188.2. հոդվածի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2025 թվականի հունվարի 1-ը:

3. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության կողմից:

4. **Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ կապահովվի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխարգելումը վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման ընթացքում:

5. **Տեղեկատվություն լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.**

«**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա, նախատեսվում է պետական բյուջեի եկամուտներում որոշ ավելացում, իսկ բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

6. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ**

Նախագիծը ռազմավարական փաստաթղթերի հետ ուղղակի առնչություն չունի: